



չար մահով Պէտտի, Մարտիկի և Աւետիսեանի խումբեր զէնքը ձեռքին մեռան քաջերի պէս:

— Բայց ի՞նչն էր արդեօք որ բաժանում էր այդ հերոսներին, միևնոյն հայրենիքի զաւակներին, միասին տանջողներին և միասին ապրելու սահմանուածներին, այն ատեն երբ ամենէն աւելի պէտք կար միութեան և միացան միայն գերեզմանին առաջ...  
ՄԵՆ-ՍԷ

ՆԱՄԱԿ ՊԱՐՄԱՍՏԻՆԷՆ

Սալմաստ, 17/29 հոկտ. 99

Խանասորի խայտառակ արշաւանքից յետոյ, Սալմաստ էլ լաւ օր չի տեսել: Իսկ այն արշաւանքի թափ թփուք մնացողները, է՛լ լրբութիւն չեն թողել որ չեն արել: Ահա մի նմուշ գերջին գէպքերից.

Հոկտ. 9/21 թ գիշեր, 3-4 զինուած մարդիկ գնում են Ղալասար գիւղ, և կտորներէրէր բարձրանալով մտնում են Արզումանեան Աւետիքի (Ռուսաց վաճառականացեալ) տուն և Աւետիքից պահանջում են 100 թուման փող, երբ Աւետիք հարցնում է թէ ինչո՞ւ համար պէտք է տայ, նրանք հանում են մի նամակ և կարգում են նամակի բովանդակութիւն մտաւորապէս հետեւեալն է եղեր. «Մենք, Դաշնակցութեան Ատրպատականի ներկայացուցիչներս, հրամայում ենք ձեզ գնալ Ա. Արզումանեանից, Չ. Շահգալահանից, Յարութիւնեան Բ.ից և Ս. Հասրէթեանից առնել 300 թուման փող, որովհետեւ դրանք համարձակ էլ են դաշնակցականներին Սալմաստից հեռացնելու մասին խորհրդակցութիւններ անել: Ի պատիժ դրանց, հրամայում ենք ձեզ անմիջապէս գան ձեզ 300 թումանը»: Աւետիքը զուր է աշխատում համոզել դրանց թէ այդպիսի բան չի եղել: Նրանք է՛լ չեն ուզում լսել, և փամփուռներ դնելով հրացանները նրա սրտին դնում են և ասում. «Կը տա՞ս թէ կը սպաննես»: Իսկ միւս երկու հերոսներ իրանց սրերը մերկացնելով, բռնում են նրա ականջները և ասում. «Կը տա՞ս թէ ականջներդ կը կտրենք»: Արզումանեան տեսնելով որ կեանք վրայ պիտի տայ, համրում է 100 թումանը: Յետոյ ստիպում են նրան որ իր տուն կանչէ մընացեալ 3 վաճառականներին. բայց Աւետիք ասում է թէ ես չեմ կարող կանչել: Նրանք գնում են. էլի կը մտնեն իրից բարձրանալով մտնում են այդ անձերի տներ և ծեծելով, հայհոյելով 300 թումանի գումար առնելուց վերջ, բաց են թողնում, Ղալասարցի վաճառականներ բողբոջներ Առաջնորդին. փող առնողները չուրացան իրենց արածներ, այլ համարձակ պատասխանեցին թէ Դաշնակցութեան ներկայացուցիչն է մեզ այդպէս հրամայել: Մեր առաջնորդ Այվատեան սրբազանը չի համարձակուում դրանց աստիճան յանդիմանել չենք իմանում թէ ինչի՞ց է վախենում:

Անբերելութիւնը այս երկու տարի տանջում է տնտեսապէս տկարացած գիւղացիներին: Սարգսարաստը կողոպտում է, բանտարկում է յանուն զաչախների: Գիւղի աղան գիւղացու հետ եղբոր պէս կիսում է ամէն բերքը: Քուրդը գաղտնի նախիրն է սա. նում. գիւղերն են կողոպտում են Այս ամէնքը գեռ տանելի է: Հապա ի՞նչ ասենք մեր ազգակեր ենիւարի. ներին որոնց պահում պահպանում ենք, նրանց պատճառով բանտարկում ենք. իսկ նրանք էլ երախտամոռ չեն, ամէն գիշեր մէկի տունն են կոխում, զոռով փող առնում, միւս օր մէկին սպաննում, սարսափելի հայհոյանքներով մարդու լսելիքներ պղծում են, մեր կանանց և քոյրերի պատիւը բռնաբարում են. է՛հ, է՛լ էք ուզում, էլ ի՞նչ միաց:

Ահա այս է Սալմաստի ներկայ դրութիւնը: Մեր միակ յոյս Առաջնորդն էր. դիմեցինք, բողբոջները նրան, այն էլ երևում է որ դրանցից վախենում է. էլ ո՞ւմ դիմենք, ի՞նչ ասենք: Մենք այժմանից մտածում ենք ապագայի սարսափելիքների մասին: Սարգսարաստը ամէն օր սպառնալիքներ ուղարկում է: Վա՛յ մեր օրին:

Այս վերջի շաբաթներ մի քանի բազմաթիւ կարաւաններ դուրս եկան գէպի Արաքս. մեծամասնութիւն կա նայք էին. ամէնքը փախչում են. օրից օր ընտանիք փոխադրողներ թիւ շատանում է: Ամէնքը ասում են. «Աղբէ՛ր, մեր Սալմաստ քանդուց էլ ճար չունինք. առնում ենք մեր տկուղ ջանն ու օղուշաղը. փախնում ենք»:

Այս վերջի շաբաթներ մի քանի բազմաթիւ կարաւաններ դուրս եկան գէպի Արաքս. մեծամասնութիւն կա նայք էին. ամէնքը փախչում են. օրից օր ընտանիք փոխադրողներ թիւ շատանում է: Ամէնքը ասում են. «Աղբէ՛ր, մեր Սալմաստ քանդուց էլ ճար չունինք. առնում ենք մեր տկուղ ջանն ու օղուշաղը. փախնում ենք»:

Սալմաստեցիք, բառի բուն նշանակութեամբ, գաղթում են. մի քանի տարի առաջ Հայերով բնակած Ասլանիկը, Քապիկը, Հըմբանաւանը, Հախվէրանը այժմ բոլորովին քրդաբնակ են: Մեր գնացին դրանց բնակիչներ: Վասպուրականից 100 աւոր ընտանիքներ եկան այստեղ, բայց բը նակիչներ էլի նոյն են մնացել. կարելի է ասել թէ պակասել էլ են: Թէ այսպէս շարունակի, հաւատացէ՛ք որ մի դժբաղդ օր էլ պիտի տեսնենք որ Սալմաստը գատարկել է իր հայ բընակիչները:

ՄԱՆ-ԱՐՄԷՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՆԷՆ

Վան, սեպտ. 29/11 հոկտ. 99

Եթէ մէկը 95-96 թումանների սարսափների ժամանակ վանի վերին աստիճանի յուսահատական վիճակը և այժման ժողովուրդի լաւ տրամադրութիւնը համեմատէ, պիտի ասէ որ այս ժողովուրդը կամ անզգայ է կամ անհոգ: Բայց ոչ մէկն է և ոչ միւսը. Թէ և կը ինչայ, կուրախանայ, կը խըմէ, ուրիշ տարիներէ աւելի այս տարի սուրբերին ուխտագնացութիւններ կատարեց, կերպէ, կը պարէ, ամառուայ գիւղերներ, աչնան երեկոյներ, նա մա նաւանգ կիրակի օրեր, խումբ խումբ այգիներ մէջ կը նստի, կը զուարճանայ, բայց այս ամենի մէջ մի տխուր մեղամաղձութիւն կը նշմարուի վէրքը ներսն է: Վանեցի Հայի սիրտը անսահման տխրութեամբ մը լեցուած է և այդ տխրութիւնը անհոգութեան քողով մը ծածկած է: Դարերէ ի վեր յարատեղ թշուառութիւնը վանեցի Հայի զգացումները չէ փթացուցած. նա գիտէ ամեն բան. նա կը գաղա իւր օրհասական վիճակը. զի ո՞ր տուն իւր զոհը չի տուաւ թուրքի սուրբին. ո՞ր տուն կողոպտողի սև կնիքը չի կրեր. բայց ի նկատի առնելով այլ և այլ հանգամանքներ, առ այժմ կը ունեւէն լաւ կը համարի գեռ համբերել և արտասուելէն աւելի լաւ կը համարի ինչպէս:

Եւ այսպէս վանեցին 95-96 թումանների յիշատակները փակագծի մը մէջ առնելով սկսած է իւր գործեր և զբաղումներ. չուկան իւր ամբողջութեամբ բացուած է. կը վաճառէ, կը գնէ անխտիր թուրքերի և Քուրդերի հետ. արտածելու և ներածելու համար պատուէրներ կուտայ և կը ստանայ. բայց ոչ ի հարկէ այն ծաւալով ինչ որ էր մի քանի տարի առաջ. իւր կարողութեան չափով կաշխատի. այրուած տունները հետզհետէ կը վերանորոգուին:

Աւելի աննշուտ գործունէութիւն մը կը տեսնուի այրուած եկեղեցիներ և դպրոցներ վերաշինումին համար: Վարպի, կարմուրտի և Ս. Գրիգորի վանքերը քիչ շատ վերաշինուած են և ամեն մէկն իւր որբանոցն ունի և բաւականաչափ որբեր կը խնամուին, մասամբ դրսէն եկած դրամներով և մասամբ ալ վանքերի հասոյթներով: Յայնկոյն վարժարանի և եկեղեցիի վերաշինութիւնը ժողովուրդի մէջ մեծ ոգևորութիւն առաջ բերած է: Չանք մը կայ ազգային հաստատութիւնները կանոնաւորուելու, բարեկարգելու: Թաղային չի միասուած վարժարանները գրէթէ ամբողջութեամբ բացուած են, իրենց մէջ ընդունելով այրուած վարժարանների ուսանողներ և ուսանողուհիներն ալ: Նորաչէնի վարժարանը իւր մէջ կընդունի թէ՛ նորաչէնի և թէ՛ Յայնկոյնների ուսանողները: Սանդխտեան օրիորդական վարժարանը նոյնպէս 2-3 թաղերի աշակերտուհիներով լեցուած է: Ամեն ժամանակ աւելի հիմա է որ ջարդուած կոտորուած վանեցին ուսման և կրթութեան պէտքը կը զգայ. կուզէ ունենալ կանոնաւոր վարժարաններ, զի գիտէ որ կրթութեամբ և ուսումով կարող պիտի լինի իւր կուրանցուցած ութերը վերստանալ և աւելի բարեբաւտիկ օրերի հասնել: Բայց մի տխուր իրականութեան առաջ կանգ կառնենք. ինչպէս անցեալ նամակովս գրած էի թէ գիւղական ուսուցիչներ չունինք, քաղաքի համար ալ ուսուցիչ չունինք. քիչ շատ կարող ուսուցիչներ թիւը շատ քիչ է. եղածները ժողովուրդի պահանջներին չեն կարող բաւականութիւն տալ, զի մի մասը հնութեանց թանգարանը գըրուելիքներ են, իսկ միւս մասն ալ ուսուցչական ասպարէզին մէջ մտնելու գեռ վաղահասներ. իրենց մտաւորական կարողութիւններ շատ սահմանափակ են: Ինչ որ ժողովուրդը կուզէ ստանալ ուսուցիչներէն, ասոնք չեն հասկանար. չեն ըմբռնել թէ վա.

նեցի Հայի ի՞նչ կը պահանջէ իրենցմէ: Ուսուցչի սով կայ. զարգացած և լուրջ ուսուցիչների պէտք ունինք. Գունտագճեաններ կուզենք ոչ թէ շառլաթան իմաստակներ:

Քաղաքամէջի 7 եկեղեցիների տարիներէ ի վեր անլուծելի խնդրոյն լուծմամբ կանոնաւորուած է այստեղի օրիորդաց և տղայոց վարժարանների գրութիւնը: Այս 7 եկեղեցիներէն և ոչ մէկն ունէր առանձին առանձին ոչ բաւականաչափ ժողովուրդ, ոչ քահանայ և ոչ ալ հասոյթ և դորա համար ալ կանոնաւոր ժամասացութիւն կարելի չէր կատարել և եղած քիչ շատ հասոյթներն ալ մէկ երկու թաղական աղաքի գրպանին մէջ կը կորսուէին: Բայց ներսէս եպիսկոպոսի մէկ խելացի կարգադրութեամբ այդ 7 եկեղեցիների հասոյթները միացուեցան ի նպատակ վարժարանին և թաղային փառասիրութեանց ալ բաւականութիւն տրուեցաւ, հերթով օր մէկ եկեղեցիի մէջ ժամասացութեան կարգը հաստատուելով:

ՄՈՒՇԵՂ

ՆԱՄԱԿ ՈՒՄՄԱՆԷՆԷՆ

Եւր, 3/15 նոյ. 99

Կրկին յերազուր թու թիւն մը պատահեցաւ Պուրգէշտի Սիլվեսթրու փողոցին թիւ 7 տունը:

Անիգայ շէօրճէսզու անուն այրի կին մը իր տունը նիգոյին անուն Հայի մը վարձու կուտայ, տան վարձն ալ մինչև նոյեմբերի 15ը ընդունելով: Նոյն միջոցին միևնոյն տունը Հաճի Արդուր անունով ուրիշ Հայի մ'ալ վարձու կուտայ հոկտ. 26էն սկսեալ (1): Երէկ (հոկտ. 26) առաւօտեան ժամը 9ին Հաճի Արդուր իր կարասիներովը կուգայ վարձու առած տունը փոխադրուելու: Նիգոյին որ պիտէր թէ մինչև նոյեմբ. 15ը իրաւունք ունի հոն բնակելու, կը դիմագրէ. իսկ տանտէր կինը սեռեկին դուռը ու պատուհանները կը հանէ, կը տանի (2):

Սաստիկ կուր մը կը ծագի այս երկու Հայերու միջև: Արդուր դանակ մը կառնէ, երեք հարուած կուտայ նիգոյին. ասիկայ ալ դանակով մը կը դարնէ իր ոտիւրը, այնպէս որ երկուքն ալ ուժէ սպառած գեղին կընկնին արինաթաթախ:

Նոյն բաժանման ոստիկանը (գումբ, սար) փութով կուոյն տեղը կը հասնի, երկու վիրաւորուած Հայերէն մէկը մէկ հրանդանոց, միւսն ալ ուրիշ հրանդանոց մը կը զրկէ դարմանուելու համար. ասոնց վիճակը սոսկալի է.

(1) Ռուսմանիոյ մէջ ընդհանուր սովորութիւն է որ անշարժ հաստատութիւնները, ինչպէս բնակութեան տունները, քեղերը և այլն, վարձու կը տրուին: Ս. Գրիգորի օրը այսինքն ապրիլ 23ին և Ս. Դեմետրեայ օրը հոկտ. 26ին:

(2) Հին ատեններ երբ տանտէր մը իր վարձուօրէն դժգոհութիւն ունենար, կուգար տանը դուռը կը հանէր, և ասիկայ վարձուօրը գորս հանել կը նշանակէր. իսկ այսօր ասանց դատաւորին վճարել և ասանց ոստիկանի մը ներկայութեան տանտէր մը չի կրնար գորս հանել վարձուօրը:



տը վճարել և հանդուցեալի որդին Տ. Շարլը տը Լէսէրս ճառեր խօսեցան: Պատերազմական և վաճառականական բազմաթիւ նաւեր կեցած էին ջրանցին բերանը: Արձանը գեղեցիկ տեսարան մը կը ներկայացունէ:

Նոյն գիշեր Քորթ Սայրտի մէջ շքեղ տոնախմբութիւն եղաւ: Ֆրանսական «ինտիւս» շոգենաւին մէջ մեծ ճաշկերպութիւն և պարահանդէս տրուեցաւ: Բանահետեւ շոգենաւը դնաց իւր մայրիկ և Սուէզ ուր նաև հանդէսներ կը կատարուին: «ինտիւս» երէկ ճանաչու ելած կը լինի Մարտէյլ վերադառնալու համար: Խըրտիվը Տ. Շարլը տը Լէսէրսին պատուելու համար: մի ճաշկերպութիւն տուաւ:

— Վաշինկթընէն կիմացունեն նոյ. 18ին թէ Օթթիս զօրավարէն հեռագիր ստացուած է որ Ակուիւնալտօի ներքին գործերի քարտուղարը գերի ինկած է Ամերիկացիներէ ձեռքը: Երկը զօրավարը կը քալէ Բոտոբրիպիտի վերայ ուր ամբարցած են փրկուածները: Բնակիչները լաւ ընդունելութիւն կընեն ամերիկեան զօրքերին: անոնց ուտեստ կը հայթայթեն:

— «Մէքսիկոյ Տիպոգրաֆի» կըսէ թէ անգլիական շոգենաւանի շատ մը տեղերէն կիմացունեն որ բաւական ծանր խռովութիւններ ծագած են: Ֆոփիստա մօլլան որ սուրբ պատերազմ կը հրատարակէ, բաւական մեծ ոյժեր կեդրոնացուցած է Ահմատուանի մէջ Անգլիական կառավարութիւնը զօրք զրկած է այդ պատմաբանի վրայ:

— Տիկին Սալվադորին գրէ թէ յանկարծակի մեռաւ Հաթիթի մէջ նոյ. 20ին:

**ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ**

Ի նպատակ հայ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ «Բազմավէպ» բացատրիկ պրակ մը կը հրատարակէ: Թերթին երկայնութիւնն է 42 հարիւրորդամէթը, լայնքը 30 հարմ.: Թերթը կը բաղկանայ 40 էջերէ, և ամէն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է: Թերթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր, կը պարունակէ ժողովրդեան ուշադրաւ, հետաքրքրական և օգտակար յօդուածներ:

«Բազմավէպ»-ի այս բացատրիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իբրև անդրանիկ «Հայ պատկերազարդ թերթ»-ը Illustration Armenienne, նման եւրոպական մեծ ազգայնաբանական պատկերազարդ թերթերու:

Կը տպուի մի քանի հազար և ստակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն:

Գինն է 2,50 ֆր. = 1 րբ. = 50 սէնթ. Այս ծանուցագրով կը հրատարակուի մերազնեայ այն ամէն ազնիւ ու գթած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացատրիկ պրակին համետ ու մասնակցութիւն ձգելու հայ որբիկներու գանձանակին մէջ:

Բաժանորդագրաց անունն, և ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնու.

թեան պիտի հասնի, հաւաքուած գումարը և որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին «Բազմավէպ»-ի պրակներուն մէջ:

Այս բացատրիկ թերթին մէջ կը տպուին նաև ծանուցումներ. մէկ տողի գինն է 25 սանթիմ. փափաքողք փութան յղել իրենց ծանուցումները: Մեր հասցէն է՝

Rédaction de la Revue «PAZMAVEB» (St. Lazare) (Italie) VENISE

**ՄԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ ԾԱԽՈՒ ԳԻՐՔՆԵՐ**

Արմէնիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց առջեւ նշանակուած գիներն մէջ հաշուուած է նաև զրկելու փոստի ծախքը:

Ծրարները ապահովագրուած (recommandé-registeré) ստանալ ու զոդները պէտք է որ ամեն մէկ ծրարի (մինչև 2 քիլո) համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն:

ՃԲ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆ

**ՆՄՈՅՇՆԵՐ Մ. ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆԻ**

ԳՐԱՆ ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթոգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանիսն ամփոփուած են այս տետրակի մէջ իբրև նոյնիսկ զանազան քաղաքներէ մէջ և զանազան տպագրութիւններէ տակ իրերէն գրած ոտանաւորներէ որոնք ժամանակին հրատարակուած չի լինելով կորսուած են այժմ: Այն քանի ոտանաւորներ որոնք իբրև նմայ ամփոփուած են այս տետրակի մէջ ցիր և գան կը գտնուին Կ. Պօլիս արդարուած ազգային երգարաններէ մէջ՝ որոց վերստին տպագրութիւն վաղուց արգէն արգելուած է, և Ասիա և Արմէնիա լրագիրներին մէջ: Նմանքէք մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաև թէ այդ ոտանաւորներին տպագրութիւններ տակ ներշնչուելով գրուած են: Գինն (10 սանթիմ 15 սանթիմ):

**ՇԷՔՍԵՐԻ ԶԱՄԼԷՂԸ**

Շէքսպիրի ՀԱՄԼԷՂԸ որ արեւմտեան աշխարհաբար լեզուով հայերէնի թարգմանած է քաջ անգլիագէտ Տիար Գարեգին Յ. Փափազեան, կարելի է ստանալ նաև Արմէնիայի խմբագրատունէն:

Տպագրուած է վիեննայի Միլիթարեանց տպարանը, մաքուր թղթի վրայ և ունի մեծ ութանկ զրկով 183+ԻԳ. երես:

Գինն է 2 ֆրանք և 50 սանթիմ:

**ՄԻ ՊՈՒԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ (ՉԱՔԱՐԻԱ ՍԹՈՅԱՆՈՎ)**

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ ԵՊԻՏԻՓ ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆ 1894

Պուկարիտի անկախութեան հերոսներէ մէկին, Չաքարիա Սթոյա, նովի, որ իր ընդունակութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հեռու հեռէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուկարիտի Ազգային ժողովի նախագահ դառնալ խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւնն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաև Պուկարիտի թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուկար հայրենասէր յեղափոխականների գործունէութեանը մասին: Սկիզբը գրուած է նաև հեղինակին, Բրոֆէսէօր Լուի Լըժէի, և թարգմանչին միջև եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն թարգմանութեանն առթով:

Հեղինակը շատ իրաւամբ կը գրէ իր յառաջարանի վերջ թէ «Չարմանք պիտի պատճառէ ինձ եթէ ընթերցողները հետաքրքրութիւնը չհարժի պետական մարդ դարձած մի գիւղացիի այս վաւերական պատմութեան վրայ»:

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանք և 40 սանթիմ:

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներին 25 % զեղչ կը լինի:

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանք է):

— HISTORY of the ARMENIANS IN INDIA. From the earliest times to the present day. By MESROB J. SETH Armenian examiner to the University of Calcutta and Member of the Asiatic Society of Bengal. Calcutta. 1895.

(Price: 5 francs at Marseilles or 5 fr. & 50 centimes post free.)

(Մարտէյլի մէջ 5 ֆրանք է. Մարտէյլէն դուրս զրկուելու համար 5 ֆրանք և 50 սանթիմ):

**ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻԻՐԱՄԵԱՅ (1794-1894) ՅՈՒՅԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ**

Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձին առթով 1894 թուականին հրատարակուած այս միաձալ գիրքով և լուսատիպ (phototypique) շքեղ պատկերի մեծութիւնն է 50x35 հարիւրորդամէթը և տպուած է 70x45 հարիւրորդամէթը քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով Մէյտեղը գրուած է հայ լրագրութեան հիմնադրին, Տ. Յարութիւն ԲՏԻ. Շմաւոնեանի, պատկերը և բոլորովը 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրները, անոնց գրէ թէ ամենքի խմբագրապետների պատկերներով:

Գինն է 4 ֆրանք, ճանապարհա.

ծախքը մէկտեղ հաշուած. իսկ Պարսկաստանի համար 2 ֆրանք և 50 սանթիմ:

\* \* \* Գաղեմքեալեան Հ. Գ. — Պատմութիւն Հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը. Հատոր Ա. 1794-1860: Մէկ լուսատիպ պատկերով: Գինն է, ճանապարհածախքով մէկտեղ, 2 ֆր. և 50 սանթիմ:

Վերոգրեալ թէ՛ պատկերը և թէ՛ գիրքը կարելի է ստանալ Արմէնիայի խմբագրատունէն, արժէքը կանխիկ զրկելով:

**ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՆԱԿ ԱՐՄԵՆԻԱ ԼՐԱԳՐԻՆ**

Արմէնիայի շրջանի սկզբէն (օգոստոս) բախորդ եղած լինել և կանոնին համաձայն իրենց բաժնորդագին 20 ֆրանքը կանխիկ վճարել փափաքողներին մի գիւղութիւն տուած լինելու համար, ահա մենք ծախու հանած ենք «Խնայողական գանձանակ Արմէնիա լրագրի»:

Ս. մեն անգամ երբ մարդ գիւղութիւն ունենայ արծաթ 50 սանթիմոց մը (10 սէնթ ամերիկեան = 50 սթոթինքա պուկարական = 50 պանի ուսմանական և այլն) մէկ կողմ դնելու, կը ձգէ այդ խնայողական գանձանակի մէջ, ուր ձգուածը ա՛լ անկարելի է որ դուրս հանուի մինչև որ Արմիայի բաժնորդագին 20 ֆրանքը (40 հատ 50 սանթիմոց) մէջը լեցուցելով չամբողջանայ: Այդ ժամանակ միայն կրնայ պարպուիլ, տակի կողմէն կախարչը դարձուելով և պարպուելէն յետոյ նորէն կրնայ գոցուել 20 ֆրանքի մի նոր խնայողութիւն ալ գոյացուելու համար:

Գանձանակը գիւրատար փոքրիկ բան մ'է որ մինչև իսկ գրպանի մէջ կրնայ պահուիլ եթէ ուզուի: Վրան չինուած կայ նաև քանակաչափ մը որ գանձանակին մէջ ձգուած դրամները 5 ֆրանքի հասածին պէս, կը սկսի այնուհետեւ ցոյց տալ թէ մէջի գումարը ո՛րչափի հասած է:

«Խնայողական գանձանակ»-ի գինն է 2 ֆրանք: Այդ գումար մեկ վճարողին կը զրկուի գանձանակին հետ մէկտեղ մի ստացագիր որի վրայ նշանակուած կը լինի գնողի անունն ու հասցէն: Եթէ ՄԻԵԻՆՈՅՆ ԱՆՁԸ, առանց ուշանալու ժամանակին բաժնորդ գրուելով Արմէնիա լրագրի տարելիցանի սկզբէն (օգոստոս ամիս), 18 ֆրանքի հետ մէկտեղ յիշեալ ստացագիրը վերադարձունէ Արմէնիայի խմբագրութեան, ամբողջ մէկ շրջանի բաժնորդագին 20 ֆրանքը վճարած կը համարուի, որով «Խնայողական գանձանակը» ձրի կը մնայ իրեն:

**ՅՆՈՐԷՆ-ԻՄԱԳԻՐ Մ. ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆ**

ՄԱՐՍԷԼ Լայրէի տպարան Մ. Փորթոգալեանի Le Gérant: François CARRIERE Imp. M. Schickler, 9, Quai du Canal, Marseille.